Կոնցեռն Դիալոգ

Հասցե՝ Չարենցի 1, 207 գրասենյակ
0025 Երևան, Հայաստան

Հեռ.՝ +374 60 278888
Էլ. փոստ՝ info@dialog.am

Պաշտոն՝ Ավագ իրավաբան, փաստաբան

Գործատու՝ "Կոնցեռն-Դիալոգ" ՓԲԸ

Աշխատանքի նկարագրություն. «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական ընկերությունը փնտրում է փորձառու և բարձր մոտիվացված **ավագ իրավաբանի՝** քաղաքացիական և կոմերցիոն իրավունքի պրակտիկայի թիմին միանալու համար: Թեկնածուն պետք է ունենա իրավական տեսության խորը գիտելիքներ, իրավական հասկացությունների գերազանց իմացություն և լիարժեք տիրապետի հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին: Թեկնածուն ներկայացնելու է հաճախորդներին դատարաններում և վարչական վարույթներում, տրամադրելու է համապարփակ իրավաբանական խորհրդատվություն, մշակելու է մեմորանդումներ և կարծիքներ, հետևելու է իրավական փոփոխություններին և մասնակցելու է ընկերության հրապարակումներին:

Պարտականություններ՝

- Հաճախորդներին ներկայացնել քաղաքացիական, վարչական և սնանկության դատարաններում, վարչական վարույթներում և վեճերի լուծման այլընտրանքային վարույթներում
- Կազմել դատավարական փաստաթղթեր (հայցեր, պատասխաններ, բողոքներ, դիրքորոշումներ և այլն) և իրականացնել ապացույցների հավաքագրման/ապահովման աշխատանքներ:
- Հաճախորդներին (անհատապես կամ թիմի կազմում) տրամադրել իրավաբանական խորհրդատվություն:
- Կազմել, վերանայել իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ համաձայնագրեր, կորպորատիվ փաստաթղթեր և իրավական կարծիքներ/զեկույցներ:
- Մասնակցել իրավական աուդիտի իրականացմանը, իրականացնել իրավական աուդիտ և կազմել հայտնաբերված ռիսկերը վերացնելու կամ մեղմելու միջոցներ պարունակող զեկույցներ (անհատապես կամ թիմի կազմում):
- Կատարել օրենսդրական, կարգավորող և դատական զարգացումների մոնիթորինգ և վերլուծություն խորհրդատվություն տրամադրելու, ընդունված փոփոխությունների և սպասվող զարգացումների վերաբերյալ հաճախորդների համար գրառումներ կամ բլոգային հրապարակումներ կազմելու համար:
- Հեղինակել ընկերության կողմից կատարվող հրապարակումներ, հոդվածներ:
- Ուղղորդել կրտսեր աշխատակիցներին և պրակտիկանտներին:
- Ընկերության գործընկերների հանձնարարությամբ կատարել լրացուցիչ իրավաբանական առաջադրանքներ:

Պահանջվող որակավորումներ.

- Իրավագիտության բակալավրի (4 տարի) կամ մասնագիտացված (5 տարի) աստիճան. իրավագիտության մագիստրոսի (LL.M.) և իրավագիտության դոկտորական աստիճանները կդիտարկվեն որպես առավելություն:
- Նվազագույնը չորս (4) տարվա մասնագիտական փորձ որպես գործող փաստաբան: Փաստաբանի արտոնագիրը պարտադիր է (անդամակցություն Հայաստանի փաստաբանների պալատին):
- Ուժեղ դատողություն և իրավական ակտերի կազմման հմտություններ:
- Անհրաժեշտ է գրավոր և բանավոր հայերենի, անգլերենի և ռուսերենի իմացություն: Լրացուցիչ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:
- Իրավաբանական հետազոտությունների հարթակների բարձր իմացություն, Microsoft Office Suite-ի և այլ տարածված գրասենյակային ծրագրերի իմացություն:
- Ինքնուրույն աշխատելու և համագործակցային թիմային միջավայրում աշխատելու կարողություն(ներառյալ քրեական իրավունքի գործընկերների հետ բարդ վեճերի դեպքում), ցուցաբերելով ինքնակարգապահություն, ուժեղ պատասխանատվություն և ճնշման ու խիստ ժամկետների պայմաններում արդյունավետ գործելու կարողություն:
- Իրավական սկզբունքների, հասկացությունների և օրենքի կիրառման ինստիտուցիոնալ մեխանիզմների համապարփակ ընկալում:
- Էթիկական չափանիշների և մասնագիտական սկզբունքների պահպանում աշխատանքի և անձնական վարքագծի բոլոր ասպեկտներում:
- Իրավաբանի մասնագիտության նկատմամբ անկեղծ կիրք և շարունակական մասնագիտական զարգացման նկատմամբ անսասան նվիրվածություն:

Հետաքրքրված անձիք կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը career@dialog.am և ani.vardanyan@dialog.am էլ հասցեին՝ նշելով «Ավագ իրավաբան, փաստաբան» հաստիքի անվանումը: